ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 սեպտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

127
(2977)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈՒ Է ԱՄԵՆ ԱՄԻՍ ԳՈՒՄԱՐ ՏՎԵԼ Ն. ՓԱՇԻՆՅԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ ԹԵՐԹԻՆ

Վերջերս ՀՀ դատախազությունը մեծ շուքով հրապարակեց Վատիկանում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանին վերաբերող 76 դրվագով քրեական վարույթի մասին:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով ՀՀ քննչական կոմիտեի ղեկավարին մի քանի հարց է ուղարկել՝ մասնավորապես հետաքրքրվելով.

• «արդյոք ուսումնասիրվել են «Հայկական ժամանակ»-ի հետ Մ. Մինասյանի փոխհարաբերությունները

• մասնավորապես ինչ պայմաններից կամ դրդապատճառներից ելնելով է «Պրեսս ստենդ» ընկերությունը, որը ըստ Դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Սամվել Հակոբյանի՝ փոխկապակցված է Միքայել Մինասյանի հետ, գնել «Հայկական ժամանակ» օրաթերթի ամբողջ տպաքանակը՝ առանց վերադարձի. իսկ մյուս թերթերի դեպքում այդպիսի պայմանագիր չի եղել: Ինչ իրական պայմանավորվածություն կամ դրդապատճառ կար այդ արտոնյալ պայմանագրի հետեւում»:

Քննչական կոմիտեն այս հարցերի պատասխանը համարել է նախաքննական գաղտնիք:

«Ժողովուրդ» օրաթերթի մյուս հարցին, թե «Միքայել Մինասյանը իր՝ 2020 թվականի հունիսի 20-ի «Ստի վերջը 10» «խոհանոցային» բացահայտման ժամանակ հայտարարել էր, որ ամեն ամիս ՀԺ փոխխմբագիր Հայկ Գեւորգյանի միջոցով կոնկրետ գումար է փոխանցել ՀԺ-ի խմբագիր Նիկոլ Փաշինյանին, որ նրա ընտանիքի մասին նյութ չգրվի ՀԺ-ում. արդյոք այս դրվագով քննություն իրականացվո՞ւմ է, եւ ի՞նչ նոր հանգամանքներ կան հանրային հարթակում հնչեցված աղմկալի այս բացահայտումից հետո: Չվնասելով նախաքննությունը՝ ակնկալում ենք հնարավորինս ընդգրկուն պատասխաններ»:

Սակայն այս պարզ հարցին էլ ՀՀ քննչական կոմիտեն տվել է պատասխան, թե «հայցվող տեղեկությունները համարվում են նախաքննական գաղտնիք, որոնց տրամադրումը ներկայումս նպատակահարմար չէ»:

Անահիտ Ավանեսյանը ՀՀ առողջապահության նախարար է դարձել 2021 թվականին եւ նշանակումից մեկ տարի անց դարձել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Անահիտ Ավանեսյանը իշխանության եկել է «նախկինների» աջակցությամբ եւ միջամտությամբ: Բանն այն է, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի կինը՝ Լյուդմիլա Տեր-Պետրոսյանը, Անահիտ Ավանեսյանի մոր՝ Մարգարիտա Վարդանյանի մտերիմ ընկերուհին է: Ավանեսյանը 90-ականներին հայտնի Դեղագիտական ասոցիացիայի նախագահ ու «Արֆարմացիա» դեղագործական ընկերության տնօրեն Մարգարիտա Վարդանյանի դուստրն է: Ավանեսյանի կապերը Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքական շրջանակի հետ ներկայումս, կարծես, սառեցված են, սակայն իշխանությունը նախարարի անցյալը չի մոռանում: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Անահիտ Ավանեսյանի ընտանիքին պատկանող «Ուիգմոր» բժշկական կենտրոնին ՀՀ առողջապահության նախարարությունը բացումից օրեր անց 600 միլիոն դրամ՝ գրեթե 1,5 միլիոն դոլար գումար հատկացրեց: Հարցեր առաջացան, բայց դրանք մնացին անպատասխան, քանի որ իշխանությունն այս փաստը որպես զենք է պահում՝ Ավանեսյանի սայթաքումների դեպքում օգտագործելու համար: Անահիտ Ավանեսյանի այս փոխանցումը ենթադրյալ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում, ինչը դեռեւս անպատիժ է մնում:

ՔՊ-ականները սպասում են Նիկոլ Փաշինյանի հրահանգին, որպեսզի հասկանան՝ մասնակցե՞ն սեպտեմբերի 28-29-ին Մայր տաճարի Վերաօծման եւ Մյուռոնօրհնության սուրբ արարողություններին, թե՞ ոչ: «Ժողովուրդ» օրաթերթին վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը հայտնել էր, որ վարչապետը հրավեր ստացել է, բայց մասնակցության հարցը դեռ քննարկում են: «Ժողովուրդ» օրաթերթը փորձել է Փաշինյանի կառավարական կաբինետի նախարարների խոսնակներից պարզել՝ արդյոք նրանք մասնակցելու են սուրբ ծիսակատարություններին: Պարզեցինք, որ նախարարների մի մասը դեռ որոշում չունի, իսկ մյուսների խոսնակներն էլ դեռ չեն արձագանքել: Միայն ցավակցական ու շնորհավորական ուղերձներ հղող ՀՀ նախագահի գրասենյակից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել են, որ սեպտեմբերը ծանրաբեռնված է. ուստի դեռ որոշում չկա մասնակցության վերաբերյալ: ՄԻՊ գրասենյակից մեզ եւս ասացին, որ ստացել են Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությանը մասնակցելու հրավեր, սակայն մասնակցության վերաբերյալ հորդորեցին հետեւել պաշտոնական լրահոսին: ՔՊ-ական պատգամավորներից մի մասի խոսքով՝ Մայր Աթոռից իրենք դեռեւս հրավեր չեն ստացել, իսկ ստանալու դեպքում չգիտեն՝ կգնա՞ն, թե՞ ոչ: Այսինքն՝ իշխանականներին անգամ եկեղեցական սուրբ արարողություններին մասնակցելու համար Նիկոլ Փաշինյանի թույլտվությունն է պետք. ու հիմա ամբողջ թիմով սպասում են՝ տեսնեն իրենց ղեկավարը գնալո՞ւ է, թե՞ ոչ, նոր, ըստ այդմ, որոշում կայացնեն:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգը, ամենայն հավանականությամբ, կկարճի Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի ու «օրենքով գողի» հարազատի միջադեպի գործը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ մարզպետին նախաքննական մարմինը չի հարցաքննել, ու դատելով իրավիճակից՝ չի էլ հարցաքննի, եւ, ինչպես ՔՊ-ականների մասնակցությամբ բոլոր միջադեպերը, այս մեկն էլ ծածկադմփոց կարվի: Հիշեցնենք, որ Աշտարակ քաղաքում հայտնի «Նվոյին» պատկանող Wine Corner Ashtarak-ում քաշքշուկ էր տեղի ունեցել: Օգոստոսի 26-ին Shamshyan.com-ը գրեց, որ Hayat Project-ի համերգի ժամանակ ներկա են եղել նաեւ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը եւ «օրենքով գողի» զարմիկը, որի հետ պաշտոնյան վիճաբանություն է սկսել այն բանի համար, որ պատվիրել է երգ՝ «Вот такая доля воровская»-ն, ու մարզպետն ընդդիմացել է՝ ասելով. «Ես այստեղ՝ դու ինչ-որ գողական ե՞րգ ես պատվիրում», ու սկսվել է վիճաբանություն: Ավելին՝ «Ժողովուրդ»-ը գրել էր, որ իրավապահները միջադեպից հետո մարզպետից հետաքրքրվել են, թե ինչ ծեծկռտուք է եղել: Մեզ տեղեկություններ հասան, որ մարզպետ Մովսիսյանը երդումներ է տվել, թե ընդամենը լեզվակռիվ է եղել, ծեծկռտուք չի եղել: Փաստ է մեկ բան՝ նախաքննությունը շարունակվում է ու իրավապահները տրամադրված են գործը կարճելու:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ ԱՐՑԱԽ ՏՈՒՆԴԱՐՁԻՆ», ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ադրբեջանի կողմից Արցախի բռնազավթման եւ Արցախի ժողովրդի բռնի տեղահանության տարելիցի կապակցությամբ Արցախի Հանրապետության գործադիր, օրենսդիր իշխանության ներկայացուցիչները, նախագահ Սամվել Շահրամանյանի գլխավորությամբ, ինչպես նաեւ մշակութային եւ քաղաքական գործիչներ, բազմաթիվ քաղաքացիներ ու զոհված տղաների հարազատներ այցելել են Եռաբլուր զինվորական դանթեոն: Նրանք ծաղիկներ են խոնարհել՝ հարգանքի տուրք մատուցելով Արցախի համար նահատակված բոլոր հայրենակիցների համար:

«Ժողովուրդ» օրաթերթը աշխատել է տեղում եւ զրուցել հասարակական, քաղաքական գործիչների, մշակույթի ոլորտի ներկայացուցիչների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մշակութային գործիչ Ռուբեն Հովհաննիսյանն ասել է. «Միայն գերեզման եւ Եռաբլուր սարքելով չէ, պետք է մարդկանց միտքը կառուցել»:

Հարցազրույցը մանրամասն ներկայացնում ենք ստորեւ:

-Պարոն Հովհաննիսյան, Արցախի հայաթափումից անցել է մեկ տարի, եւ մեկ տարի է, ինչ հայկական երկրորդ պետությունը գտնվում է օտար երկրի տիրապետության տակ: Մեկ տարի անց, վերլուծելով փաստերը, ինչածարտահայտություններն ու իրադրությունը, ի՞նչ կարող ենք արձանագրել: Ձեզ համար պա՞րզ է հիմնական մեղավորների շրջանակը: Որո՞նք են պարտվելու ու այսքան զոհեր տալու հիմնական պատճառները:

-Մեղավորները ակնհայտ են, սակայն, նրանցից զատ, մեղավորություն պետք է գտնել նաեւ մեր մեջ: Հավատացինք թուրքի խոսքին, որը մեզ պառակտեց, տարավ պարտության, ապա Արցախի կորստին: Անցած մեկ տարվա ընթացքում մեր հայրենակիցների համար ոչ մի բարոյահոգեբանական քայլ չարվեց: Միայն գերեզման, Եռաբլուր սարքելով չէ, մարդկանց միտքն ու հոգին է պետք կառուցել, ու ամենօրյա աշխատանքով վառ պահել այն հույսը, որ տունդարձի հնարավորություն դեռ կա....Ցավալի է, շատ ցավալի....:

-Փաստորեն, իրատեսական եք համարում այն տեսլականը, որ թեկուզ տարիներ անց Արցախ վերադարձի հնարավորություն կլինի:

Արցախի իշխանությունները նշում են, որ ճիշտ բանակցությունների դեպքում դա հնարավոր կլինի, իսկ Նիկոլ Փաշինյանը ասում է, որ դա անիրատեսական է:

-Ես գրեթե ամենուրեք խոսում եմ Արցախ վերադարձի մասին եւ հավատում եմ դրան: Ինձ շատերն հակադարձում են, թե հեքիաթ եմ ասում:

Մանկությունից որքան հեքիաթ որ ինձ պատմել են, կամ ես կարդացել եմ, բոլորն իրականացել են, ուրեմն՝ թող սա էլ լինի իմ հեքիաթը, որը կիրականանա. իսկ նրանք, ովքեր չեն հավատում, թող չխանգարեն մեր երազանքների իրականացմանը՝ մեր տունդարձին, քանի որ միեւնույնն է լինելու է: Ես հավատում եմ դրան:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«ԵՐԵՎԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՊԵԻՆՔ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ»

-Ես խոնարհվում եմ ձեր առջեւ, սիրելի արցախցի քույրեր եւ եղբայրներ, ամոթ եմ զգում ձեր առջեւ, - այս մասին Սուրբ Խաչ եկեղեցում, դիմելով արցախցիներին, ասաց Բագրատ Սրբազանը:

«Ամոթ եմ զգում, որ չեմ կարողացել տեր կանգնել այն հերոսական կյանքին, որ դուք եք դրել: Ամոթ եմ զգում, որ այստեղ՝ Երեւանի սրտում եմ ձեզ հանդիպում, մինչդեռ մեզ համար մի մեծ տոնախմբություն կդառնար՝ Ստեփանակերտում Շուշիում, Գանձասարում եւ Ամարասում միասին հանդիպեինք», - ասաց նա:

ԱՐՑԱԽԸ ՀԱՅԱԹԱՓՎԵՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Ադրբեջանի ներխուժում Արցախի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից մեկնարկված լայնամասշտաբ ռազմական ագրեսիա՝ ընդդեմ Արցախի Հանրապետության, որը սկսվել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, եւ ուղեկցվել հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացվող էթնիկ զտումներով:

Հարձակումը սկսվել է զանգվածային հրթիռա-հրետակոծությամբ, ապա օգտագործվել են անօդաչու թռչող սարքեր, որին զուգահեռ առաջնագծի միջդիրքային հատվածում ընթացել են ինտենսիվ մարտեր: Իբրեւ թե առաջնահերթ թիրախներ են ընտրվել տարբեր ռազմական օբյեկտները, որոնց ուղղությամբ, տարբեր միջոցներով, զինատեսակներով կրակ է բացվել: Ստեփանակերտում հայտարարվել է օդային տագնապ:

Հրետակոծվել են մայրաքաղաք Ստեփանակերտը, այլ քաղաքներն ու գյուղերը: Մարտական գործողություններ են սկսվել շփման գծի ողջ երկայնքով: Արցախի պաշտպանության բանակը ծանր մարտեր է մղել ճակատի տարբեր ուղղություններում, մի շարք հատվածներում ինտենսիվ կրակով կասեցվել է ադրբեջանական բանակի մխրճումը: Ադրբեջանական կողմը տարբեր վայրերում թիրախավորել էր կապի ամբողջական համակարգը: Բացի ռազմական օբյեկտներից, հրետանու, անօդաչու թռչող սարքերի, եւ որոշակի հրթիռային համակարգերի միջոցով թիրախավորվել են նաեւ քաղաքացիական տարբեր օբյեկտներ: Ադրբեջանական զինված ուժերը, շփման գծի ողջ երկայնքով իրականացնելով հրթիռահրետանային նախապատրաստություն, փորձել են առաջանալ Արցախի Հանրապետության Պաշտպանության Բանակի պաշտպանության խորքը: Հայկական զորքերը ցուցաբերել են համառ դիմադրություն, սակայն մեր կողմից եւս եղել են վիրավորներ:

Հարձակմանը նախորդել է Ադրբեջանի ԱԳՆ-ի կողմից կեղծ տեղեկատվության տարածում ականապատման եւ դիվերսիոն գործողությունների մասին: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հաղորդագրություն է տարածել այն մասին, որ Արցախի Հանրապետության տարածքում՝ ռուսական խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտում, սկսում է տեղային բնույթի «հակաահաբեկչական միջոցառումներ՝ սահմանադրական կարգի վերականգնման նպատակով»: Ձեռնարկված միջոցառումների մասին, ըստ ադրբեջանական կողմի հաղորդագրության, տեղեկացվել են ռուսական խաղաղապահ զորակազմի հրամանատարությունը, ինչպես նաեւ համատեղ գործող՝ ռուս-թուրքական մոնիտորինգային կենտրոնը: Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հաստատել է ադրբեջանական կողմից իրազեկված լինելու փաստը:

Արցախի Հանրապետության իշխանությունները հայտարարել են, որ Ադրբեջանը ցանկացել է Արցախում իրականացնի հայերի էթնիկ զտում եւ վարում է ցեղասպան քաղաքականություն:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԿՏԱ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ օրերս տեղի ունեցած ՔՊ վարչության նիստում որոշել են, որ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետ Արմեն Հակոբջանյանը պետք է հրաժարական ներկայացնի:

Քաղաքական իշխանությունը բացահայտել է, որ ՔՊ-ական քաղաքապետը հայրենի ընդդիմության հետ սերտ կապերի մեջ է եղել:

Ավելին՝ ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի, Հակոբջանյանի հրաժարականի հարցը բարձրաձայնել է նույն մարզի ՔՊ-ական պատգամավոր Կարեն Համբարձումյանը:

Նկատենք, որ Արմեն Հակոբջանյանը Սիսիանի նախկին քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի եղբորորդին է: Փաստորեն, Նիկոլ Փաշինյանը նախկինում քրեական գործերով անցնող Սիսիանի նախկին քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի եղբորորդուն նշանակել էր համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Սիսիանի համայնքապետ Արմեն Հակոբջանյանի հետ, սակայն նա այդպես էլ չպատասխանեց մեր զանգերին:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել նաեւ նույն մարզի ՔՊ-ական պատգամավոր Կարեն Համբարձումյանի հետ, ով հորդորեց մեզ գրավոր հարցում ուղարկել:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ԱՅԼԱԿԱՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի լիազորություններից ապօրինաբար զրկված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Փաստացի իմ նկատմամբ (ես գործով դեռ վկա եմ անցնում) հարուցված քրեական վարույթի առիթով դիմել եմ միջազգային գործընկերներիս՝ ինչպես քաղաքական, այնպես էլ խոսքի ազատության եւ ընդհանրապես մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներին:

Եվ ակնկալում եմ գործուն աջակցություն՝ պայքարելու իմ նկատմամբ ապօրինաբար գործադրվող ճնշման գործընթացի դեմ, քանի որ ես Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող վարույթը համարում եմ.

- խոչընդոտ միջազգայնորեն սահմանված եւ ներպետական օրենսդրությամբ ամրագրված ազատ խոսքի իրավունքի
- խոչընդոտ իմ՝ որպես պատգամավորի, անկախ, անկաշկանդ գործելու իրավունքի
- ճնշում, որպեսզի ուրիշի խախտված իրավունքների վերականգնմամբ չզբաղվեմ
- արգելք՝ միջազգային գործընկերների հետ հաղորդակցվելու
- փաստացի հետապնդում՝ իմ արտահայտած կարծիքի համար

Իհարկե, ես շարունակելու եմ աշխատել այնպես, ինչպես որ աշխատում եմ տարիներ շարունակ եւ հավատարիմ եմ մնում արդարության, թափանցիկության ու մարդու իրավունքների սկզբունքների պաշտպանության իմ հանձնառությանը»:

ԻՐԱՆԸ ՀԵՐՔԵԼ Է. ՊԱՅԹՅՈՒՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրանը կտրականապես հերքել է երկրի նախկին նախագահ Էբրահիմ Ռայիսիի զոհվելու հանգամանքների մասին իսրայելական մի շարք լրատվամիջոցների հրապարակած լուրերը: Իրանական Tasnim լրատվական գործակալության տարածած հաղորդագրությունում նշվում է, որ սուտ են պնդումներն այն մասին, թե նախկին նախագահը զոհվել է փեյջերի պայթյունի հետեւանքով: Նման լուրերը, ըստ գործակալության, միտված են խաթարելու Իրանի բնակչության վստահությունը երկրի ռազմական եւ պետական կառույցների նկատմամբ եւ հասարակության շրջանում վախի եւ հուսահատության զգացում սերմանելուն:

Իրանի նախկին նախագահ Էբրահիմ Ռայիսիին, արտգործնախարար Ամիր Աբդոլլահիանին եւ այլ պաշտոնյաների տեղափոխող ուղղաթիռը կործանվել էր այս տարվա մայիսի 19-ին երկրի հյուսիս-արեւմուտքում գտնվող Վերզեգան շրջանում: Մայիսի 20-ի առավոտյան Իրանի փոխնախագահ Մոհսեն Մանսուրին հաստատել էր օդային աղետի հետեւանքով նախագահի եւ նրան ուղեկցող անձանց զոհվելու փաստը: Պատվիրակությունը վերադառնում էր Ադրբեջան կատարած այցից հետո, որտեղ Ռայիսին եւ նրա ադրբեջանցի գործընկեր Իլհամ Ալիեւը մասնակցել էին Արաքս գետի վրա հիդրոհանգույցի բացման արարողությանը:

Սեպտեմբերի 17-ին եւ 18-ին Լիբանանի տարբեր շրջաններում գրանցվել են փեյջերների եւ հեռահաղորդակցության սարքերի պայթյունի դեպքեր, որոնց արդյունքում տարբեր տվյալներով զոհվել է 12-15, տուժել՝ 3-4 հազար մարդ: Դեռեւս հայտնի չէ, թե ինչն է դարձել տասնյակ սարքերի միաժամանակյա պայթեցման պատճառը: «Հըզբոլլահ»-ը եւ Լիբանանի իշխանությունները կատարվածի համար մեղադրում են Իսրայելին:

«ԿԱՔԱԿՑԵՆՔ ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ». ԱՄՆ ԴԵՍՊԱՆ

Միացյալ Նահանգները, չնայած Վրաստանի հետ առկա հարաբերություններին, կշարունակի աջակցել եւ օգնել հանրապետության ժողովրդին, որպեսզի երկիրը տնտեսապես ավելի հաջողակ լինի: Այդ մասին լրագրողներին հայտնել է Թբիլիսիում ԱՄՆ դեսպան Ռոբին Դանիգանը:

«Ուզում եմ եւս մեկ անգամ կրկնել, որ աշխարհում չկա Վրաստանի եվրատլանտյան ինտեգրման ավելի ուժեղ կողմնակից, քան ԱՄՆ-ն է: Մենք կշարունակենք աջակցել եւ օգնել վրաց ժողովրդին, որպեսզի Վրաստանը դառնա ավելի ուժեղ, տնտեսապես ավելի հաջողակ երկիր, Եվրամիության անդամ, իսկ հայտարարությունները, որոնց նպատակը Վրաստանին ԱՄՆ-ից մեկուսացնելն է, ոչ մի օգուտ չեն բերի»,- ասել է դիվանագետը:

ԼՂ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ունի ինքնորոշման եւ վերադարձի անվիճելի իրավունք, իրավունքներ, որոնք անհրաժեշտ են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ցանկացած տեւական խաղաղության համար:

Ասված է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախմբի հայտարարության մեջ.

«Այսօր լրանում է Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտումների եւ ցեղասպանության հետեւանքով Լեռնային Ղարաբաղից՝ իրենց նախնիների հողերից վտարված ավելի քան 100,000 հայերի բռնի տեղահանման մեկ տարին: Այս ծանր տարեդարձին մենք հարգում ենք արմատախիլ արված կյանքերն ու հիշում վերապրած ցավալի իրադարձությունները: Սա դաժան հիշեցնում է, որ այս ճգնաժամը հեռու է ավարտից, իսկ արդարությունը՝ դեռեւս անհասանելի: Վերադարձի իրավունքը պետք է լինի իրացվող ջանքերի առաջնագծում:

Բաքվի ապամարդկային հռետորաբանությամբ եւ ցեղասպան մտադրություններով խթանված զանգվածային բռնի տեղահանումը, որը նշանավորվեց ինամսյա ավերիչ շրջափակմամբ եւ բացահայտ ռազմական ագրեսիայով, միջազգային իրավունքի ակնհայտ խախտում էր: Ադրբեջանը ձգտել եւ իրագործել է Լեռնային Ղարաբաղի բնիկ հայերի զանգվածային ոչնչացումը՝ մի ամբողջ քաղաքակրթություն հեռացնելով իր հայրենիքից եւ պարտավորություն ստանձնելով ոչնչացնել նրա քաղաքական, մշակութային եւ կրոնական ներկայության եւ հիշողության բոլոր մնացորդները:

Սա անընդունելի է: Սա Լեռնային Ղարաբաղում հայ ժողովրդի հազարամյա շարունակական ներկայության պատմական խաթարում է:

Տեղահանված ժողովուրդները հայրենիք վերադառնալու անքակտելի իրավունք ունեն. այս սկզբունքը վերահաստատել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանը 2023 թվականի նոյեմբերյան որոշմամբ՝ Ադրբեջանից պահանջելով ապահովել 2023 թվականի սեպտեմբերից հետո բռնի տեղահանվածների անվտանգ եւ անարգել վերադարձը:

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ունի ինքնորոշման եւ վերադարձի անվիճելի իրավունք, իրավունքներ, որոնք անհրաժեշտ են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ցանկացած տեւական խաղաղության համար: Մենք մերժում ենք ցանկացած վարկած, որը ենթադրում է, որ ճգնաժամն ավարտվել է միայն այն պատճառով, որ հայ բնակչությունը բռնի տեղահանվել է: Իսկական խաղաղությունը չի կարող կառուցվել մի ամբողջ ժողովրդի հարկադրանքի կամ ոչնչացման վրա: Տեղահանված անձանց իրավունքները պետք է հարգվեն, իսկ նրանց վերադարձը ապահովվի միջազգային պաշտպանության ներքո:

Վերջին վեց ամիսների ընթացքում, Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի կողմից ստեղծված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախումբը հետամուտ է եղել վերադարձի եւ ինքնորոշման իրավունքի խթանման իր մանդատի իրագործմանը: Հանձնախումբը համագործակցել է միջազգային առանցքային դերակատարների, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության եւ տարբեր պետությունների ներկայացուցիչների հետ՝ մշտապես ընդգծելով տեղահանված բնակչության անվտանգ եւ հավաքական հայրենադարձության անհրաժեշտությունը: Այս ջանքերի շնորհիվ հարցը շարունակում է մնալ միջազգային օրակարգում, եւ այդ նպատակների համար կա զգալի միջազգային աջակցություն. աջակցություն, որն այժմ կախված է Հայաստանի կառավարության ակտիվ առաջնորդությունից:

Մենք կոչ ենք անում Հայաստանի կառավարությանը՝ վճռական գործողություններ ձեռնարկել այս կարեւորագույն ուղղությամբ Ադրբեջանի հետ խաղաղ բանակցություններում: Առանց վերադարձի իրավունքի չի կարող լինել կայուն խաղաղություն տարածաշրջանում: Միջազգային հանրությունը պատրաստ է աջակցել այս գործին: Սակայն Հայաստանի կառավարությունը պարտավոր է վճռականորեն եւ հաստատակամորեն պաշտպանել վերադարձի իրավունքը:

Այս հարցի շուրջ Հայաստանի կառավարության լռությունը ոչ միայն խաթարում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքները, այլեւ վտանգում է Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ անվտանգությունը:

Խաղաղությունը պահանջում է մարդկային արժանապատվություն, իսկ մարդկային արժանապատվությունը միշտ արմատավորված է մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման մեջ»:

Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախումբ

ՀԱՅՑ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԸՆԴԴԵՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ

Լեռնային Ղարաբաղի դեմ ադրբեջանական հարձակումից եւ ավելի քան 100,000 հայերի տեղահանումից մեկ տարի անց Գեղամ Ստեփանյանի ու Արտակ Բեգլարյանի կողմից հայց է ներկայացվել Միջազգային քրեական դատարանի դատախազին՝ մարդկության դեմ հանցագործությունների համար:

Թուֆենկյան հիմնադրամի եւ «Արցախի աջակցության միության» համագործակցությամբ միջազգային առաջատար փաստաբաններ Ֆրանսուա Ջիմերեյը եւ Կատալինա դե լա Սոտան ներկայացնում են Արտակ Բեգլարյանին եւ Գեղամ Ստեփանյանին: Նրանք զբաղեցրել են Լեռնային Ղարաբաղի Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը եւ եղել են իրենց հայրենիքից տեղահանված ավելի քան 100,000 մարդկանց մեջ:

Հայցի մեջ ընդգծվում է, որ նրանք ստիպված էին տառապել սննդի եւ առողջապահական օգնության բացակայությունից, որը հարուցվել էր 2022թ. դեկտեմբերին սկսած Լեռնային Ղարաբաղի 9-ամսյա շրջափակման հետեւանքով: Դրան հաջորդեց Ադրբեջանի զինված ուժերի հանկարծակի ագրեսիան 2023 թվականի սեպտեմբերի 19-ին եւ բնակչության բռնի տեղահանությունը:

Մի խումբ այլ ղեկավարներ եւ բնակիչներ, որոնք չկարողացան դուրս գալ Լեռնային Ղարաբաղից, ձերբակալվեցին Ադրբեջանի իշխանությունների կողմից եւ պահվում են անազատության մեջ: Նրանք ենթարկվում են խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի, ինչպես նաեւ զրկված են ընտանիքների ու փաստաբանների հետ պատշաճ հաղորդակցության հնարավորությունից:

Ֆրանսուա Ջիմերեյի եւ Կատալինա դե լա Սոտայի կարծիքով՝ «Ոչինչ չի կարող արդարացնել խաղաղ բնակչության՝ իրենց հայրենիքից ու տներից բռնի զրկման փաստը: Աշխարհը պետք է մերժի այս վայրագությունը, որը մեր ներկայացրած հայցի նպատակն է»:

Հայցը ներկայացվել է որպես «հաղորդում»՝ համաձայն Հռոմի ստատուտի 15-րդ հոդվածի, որը հնարավորություն է տալիս դատախազին հետաքննություն սկսել ներկայացված տեղեկությունների հիման վրա: Փաստաբանների խոսքով՝ «Լեռնային Ղարաբաղի հայերի տեղահանությունն ունի մարդկության դեմ հանցագործության բոլոր հատկանիշները: Այն եղել է անձանց բռնի տեղահանում նրանց օրինական բնակության վայրից՝ որպես լայնամասշտաբ ոտնձգություն քաղաքացիական բնակչության դեմ՝ ամբողջովին գիտակցելով դրա հետեւանքները: Բոլոր պայմաններն առկա են, որ այդ հանցագործությունների պատասխանատուները արդարադատության ենթարկվեն միջազգային քրեական իրավունքի շրջանակներում»:

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԸ ՄԵՐԺՎԵԼ Է

ՍՊԻՏԱԿՑԻ ՀԱՅԿՈՅԻ ՈՐԴԻՆ ՉԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԻ

Ինչպես ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ Սպիտակցի Հայկոյի որդու կալանավորման հարցը հասավ վճռաբեկ դատարան: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի էր դարձել, որ Գլխավոր դատախազությունը դիմել է վճռաբեկ դատարան՝ պահանջելով բեկանել ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը: Արդյունքում, վճռաբեկ դատարանը մերժեց Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին:

Ասել է թե՝ ՀՀ բոլոր դատական ատյանները՝ առաջին ատյանը, ՀՀ վերաքննիչ ու վճռաբեկ դատարանները, մերժեցին իրավապահների՝ հայտնի երգչի որդու կալանավորելու միջնորդություններն ու բողոքները:

Նշենք, որ ՀՀ վերաքննիչ դատարանը եւս մերժեց դատախազության բողոքը Հրաչյա Ղեւոնդյանի կալանավորման մասով:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազությունը խիստ է տրամադրված եւ ամեն գնով ցանկանում է կալանքի տանել երգիչ Հայկ Ղեւոնդյանի՝ Սպիտակցի Հայկոյի որդուն՝ Հրաչյա Ղեւոնդյանին:

Մեզ հայտնի դարձավ, որ դատախազությունը բողոքարկել էր հայտնի երգչի որդու ազատ արձակման որոշումը եւ դիմել էր ՀՀ վերաքննիչ դատարան, սակայն վերաքննիչը եւս գործը կալանքի չտարավ, քանի որ հիմքեր չկային, իսկ հիմա գլխավոր դատախազը դիմել է Վճռաբեկ դատարան. տեսնենք, թե ինչ է սպասվում հայտնի երգչի որդուն:

Ինչպես հայտնի է՝ մայիսի 23-ին Հրաչյա Ղեւոնդյանն ազատ էր արձակվել առաջին ատյանի դատարանի նիստերի դահլիճից. դատարանը, հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, մերժել էր քննիչի՝ նրան կալանավորելու միջնորդությունը:

Բանն այն է, որ քննչական կոմիտեն հայտարարել էր, որ իշխանությունը բռնությամբ զավթելու փորձ է կանխել: Իշխանությունը յուրացնելու նախապատրաստության համար մեղադրանք է առաջադրվել հանրությանը Սպիտակցի Հայկո անունով հայտնի երգիչ Հայկ Ղեւոնդյանի որդուն. նրան կալանավորելու միջնորդություն է ներկայացվել:

Քննչական կոմիտեն տեսանյութ էր հրապարակել, որում մի տղամարդ դժգոհում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությունից. «Այստեղ մի ելք կա՝ մտնենք՝ կառավարությունը գրավենք, մտնենք Ազգային ժողով՝ գրավենք, մտնենք ոստիկանության շենք՝ գրավենք: Հիմա ես պատրաստ եմ մեռնելեւ, ցավդ տանեմ, պիտի կրակեն թող կրակեն, ավելի լավ է մի 10-20 մարդ մեռնի, բայց, ընկեր, երկիր պահես (խմբ.)»:

Քննչականը պնդում է, թե այս խոսքերի հեղինակը Հրաչյա Ղեւոնդյանն է, որը նպատակ է ունեցել մի խումբ անձանց հետ զավթելու իշխանությունը. թե ովքեր են այդ անձինք, իրավապահները դեռ չեն պարզել, բայց, ըստ նախաքննական մարմնի, դիտարկվել էր նաեւ հանրահավաքին այդ ծրագիրն իրագործելու հարցը:

Ղեւոնդյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը: Նրա փաստաբանը հայտարարել էր՝ ձայնագրությունը մոնտաժված է, կոնտեքստից կտրված, իսկ իր պաշտպանյալն իշխանությունը զավթելու որեւէ մտադրություն չի ունեցել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՎԿԱՅԱԿԱՆ՝ ԿԱՇԱՌՔԻ ԴԻՄԱՑ. ՔՐԳՈՐԾԵՐ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից իրականացված միջոցառումների եւ դրանց հիման վրա նախաձեռնված քրեական վարույթով կատարված լայնածավալ ապացուցողական եւ այլ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության գրանցման-հաշվառման եւ քննական կենտրոններից մեկի տեսուչ Վ. Հ.-ն, նույն կենտրոնի պետ Ա. Պ.-ի հետ խմբի կազմում, իսկ որոշ դեպքերում՝ նաեւ առանձին, իր մտերիմ Գ. Հ.-ի միջոցով, վարորդական վկայական ստանալու համար դիմած 25 անձանցից ձեւական բնույթ կրող տեսական եւ գործնական քննություններ ընդունելու դիմաց, պարբերաբար ստացել է տարբեր չափերի, ընդհանուր՝ շուրջ 5 մլն ՀՀ դրամ կաշառք:

Մասնավորապես, հիմնավորվել է, որ Ա. Պ.-ն եւ Վ. Հ.-ն, իրենց ծառայողական լիազորություններն օգտագործելով 25 անձանց օգտին ապօրինի գործողություններ կատարելու, այն է՝ համապատասխան գիտելիքների եւ հմտությունների բացակայության պայմաններում նրանց վարորդական վկայական տալու համար անհրաժեշտ տեսական եւ գործնական քննությունները կազմակերպելու դիմաց, Վ. Հ.-ի հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Գ. Հ.-ի միջոցով 2023 թվականի փետրվարից հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում պարբերաբար ստացել են 180.000-ից 320.000 ՀՀ դրամ կաշառք:

Բացի այդ, Վ. Հ.-ն վերը նշված նույն ժամանակահատվածում իր ծառայողական լիազորություններն օգտագործել է ի վնաս պետական եւ ծառայողական շահերի, ոչ պատշաճ է կատարել իր ծառայողական պարտականությունները, ինչպես նաեւ կատարել է պաշտոնեական կեղծիքներ, իսկ չորս դեպքերով՝ դրդել է պաշտոնատար անձանց չարաշահել իրենց ծառայողական լիազորությունները:

Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար Ա. Պ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով /19 դրվագ/, Վ. Հ.-ին՝ 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով /19 դրվագ/, 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով /6 դրվագ/, 441-րդ հոդվածի 1-ին մասով /21 դրվագ/, 46-441-րդ հոդվածի 1-ին մասով /4 դրվագ/ եւ 445-րդ հոդվածի 1-ին մասով /25 դրվագ/, իսկ Գ. Հ.-ին՝ 46-436-րդ հոդվածի 2-րդ մասի 3- րդ կետով /25 դրվագ/ եւ 44-46-436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով /2 դրվագ/:

Քրեական վարույթի շրջանակում մեղադրանքներ են ներկայացվել նաեւ Ա. Պ.-ին եւ Վ. Հ.-ին կաշառք տված անձանց: Հիշյալ բոլոր մեղադրյալների վերաբերյալ քննված երեք տարբեր վարույթներով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթների նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ըստ էության քննելու համար:

ՆԱՐԵԿ ՄԱԼՅԱՆՆ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Դատարանի սահմանած մեկ տարվա ազատազրկումն ամբողջությամբ կրելով՝ բանտարկյալ Նարեկ Մալյանը «Վարդաշեն» ՔԿՀ-ից ազատ է արձակվել:

Մալյանին մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, այն է՝ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ: Արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչեւ չորս տարի ժամկետով: Նա ձերբակալվել էր 2023 թվականի սեպտեմբերի 20-ին: Ապրիլի 12-ին դատարանը Մալյանին մեղավոր էր ճանաչել եւ դատապարտել մեկ տարվա ազատազրկման:

ԸՆԹԱՑԻԿ

ԿԻԵՎՅԱՆ ՓՈՂՈՑԻՑ ՄԱՐԴ ԵՆ ԱՌԵՎԱՆԳԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ սեպտեմբերի 18-ին խառնաշփոթ իրավիճակ է եղել Բարեկամությունից դեպի Կիեւյան փողոց ճանապարհին:

Ըստ ականատեսների՝ 4 կամ 5 անձ ծեծի են ենթարկել մի երիտասարդի, նստեցրել մեքենան եւ առեւանգել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները քաղաքացիների ահազանգի հետքերով գնացել են ու պարզել, որ սեպտեմբերի 4-ին Դ.Ս-ն Ռ.Բ-ի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել, որ վերջինս պետք է ապահովի պատուհանի ապակյա փաթեթներ, որի համար Դ.Ս.-ն վճարել է 455.000 դրամ եւ պարտք է մնացել 255.000 դրամ, սակայն փաթեթների պատրաստ չլինելու պատճառով՝ սեպտեմբերի 18-ին՝ ժամը 20:00-ին, Կիեւյան փողոցի 11 հասցեում մի խումբ տղաներ հանդիպել են, ինչից հետո սկսվել է ծեծկռտուք, ու վերոնշյալ հասցեից առեւանգել են միջադեպի մասնակիցներից մեկին՝ Դ.Ս.-ին:

Արդյունքում՝ ֆիզիկական եւ հոգեկան ներգործություն, ինքնիրավչություն եւ մարդու առեւանգում կատարելու կասկածանքով ձերբակալվել են Ռ.Բ.-ն, Ա.Բ.-ն եւ Հ.Հ.-ն, իսկ խմբի մյուս անդամներին փնտրում են:

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Ոստիկանության Կումայրիի բաժնի համայնքային ոստիկանները, իրացնելով ստացված տեղեկությունը, Գյումրիի Երեւանյան խճուղու հասցեներից մեկի մոտ թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով հայտնաբերել, ձերբակալել եւ բաժին են տեղափոխել 48-ամյա մի տղամարդու: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է 3,65 գրամ դեղնականաչավուն զանգվածով կաթուցիչ: Տղամարդը հայտնել է, որ կաթուցիչում թմրանյութ է, պատրաստել է անձնական օգտագործման համար:

Գյումրիի բնակիչ 48-ամյա տղամարդը հայտնաբերվածի եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է Շիրակի մարզային քննչական վարչություն: Հանգամանքները պարզվում են:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 112 ԴԵՊՔ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ սեպտեմբերի 17-ից 18-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 112 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է խարդախության, անձնական ունեցվածքի գողության, մարմնական վնասվածք պատճառելու եւ այլ հանցագործությունների 1-ական դեպք:

Հայտնաբերվել են 3 հետախուզվող եւ 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 1 դեպք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 18-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 122 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱՅԹՅՈՒՆԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սեպտեմբերի 17-ին՝ժամը 17:00-ի սահմաններում, Տավուշի մարզի Իջեւան համայնքի Սարիգյուղի վերջնամասում «Նոր տեղ շին» ՍՊԸ-ն ճանապարհի կառուցման ընթացքում պայթյուն է իրականացրել, որի հետեւանքով քարի բեկորը շպրտվել ու հարվածել է նշված ընկերության աշխատակից, Տավուշի մարզի բնակիչ 27-ամյա Էդգար Նազարյանի գլխին, ով տեղում մահացել է: Էդգար Նազարյանը սահմանամերձ Կոթի գյուղի բնակիչ էր, Կոթիից տեղեկացանք, որ ընտանիքը Աբովյանում է բնակվում, Էդգարը այդ ճանապարհի կառուցման ժամանակ շինարարական տեխնիկա է աշխատեցրել: Պայթյունի ժամանակ, մի քանի հոգով բլրի վրա կանգնած՝ հետեւել են պայթյունին: Ակնհայտ է , որ տեղի է ունեցել անվտանգության կանոնների խախտում, պայթյունի ժամանակ բոլոր աշխատողները պետք է գտնվեին անվտանգ հեռավորությամբ, անվտանգ տեղ թաքնված լինեին: Էդգար Նազարյանն ամուսնացած էր, ունի փոքր աղջիկ: Նրա հուղարկավորությունը կկայանա սեպտեմբերի 20-ին սահմանամերձ Կոթիում:

33 ՀԱԶԱՐ ԴՐԱՄՈՎ ՀՈՂԱՄԱՍ Է ՕՏԱՐՎԵԼ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի՝2024թ. հուլիսի 25-ի թիվ 847-Ա որոշմամբ 2024թ. օգոստոսի 26-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 55.7քմ հողամասը, Դիլիջան համայնքի, Աղավնավանք գյուղի 1-ին փողոց, թիվ 8/1 հասցեում բնակելի կառուցապատման նպատակով, 33 420 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 33 420 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւան քաղաքի, Խաչատրյան փողոց, 27/1 շենք, թիվ 9 բնակարանի բնակիչ Արմեն Հովեսյանը, որի մասին Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 10 արձանագրությունը: Օգոստոսի 28-ին Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշել է հաստատել Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի թիվ 10 արձանագրությունը եւ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից վերոհիշյալ 55.7քմ մակերեսով հողամասը բնակելի կառուցապատման նպատակով օտարել Երեւան քաղաքի բնակիչ Արմեն Հովեսյանին: Աղավնավանքը Դիլիջան քաղաքից հեռու է 26 կմ, այդտեղ հողամասերի շուկայական գները բարձր են: List. am կայքում վաճառքի են դրված Աղավնավանքում 650 քմ մակերեսով 2 հողամասեր, որոնցից մեկի գինը նշված է 32 հազար դոլար, մյուսինը 37 հազար դոլար: Դիլիջան քաղաքի, համայնքի հասարակական կառուցապատման հողամասերը ձեւական աճուրդներով օտարվում են Երեւանի, Վանաձորի, Իջեւանի, Հայաստանի այլ բնակավայրերի բնակիչներին: Այդ ձեւական աճուրդների հետեւանքով համայնքի բյուջե չեն մտնում հսկայական գումարներ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՆԱԿԱՐԱՆ՝45 ՄԼՆ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՄԲ

ԿԳՄՍ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ պետական հիմնարկի վերջին 10 տարիների գլխավոր հաշվապահը նախորդ տարեսկզբին նշանակվեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության գլխավոր քարտուղարը:

Գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնելիս պաշտոնատար անձի հաստիքը ստանձնելու վերաբերյալ հայտարարագրում Հակոբյանը 1,5 ամիս աշխատելու համար ստացել է 2 մլն 219 հազար դրամ աշխատանքի վարձատրություն, իսկ ԿԳՄՍ գլխավոր քարտուղարի պաշտոնում վարձատրվել է ընդամենը 10 մլն դրամ:

Գլխավոր հաշվապահ եղած տարիներից 2020 թականին Հասմիկ Հակոբյանը ձեռք է բերել անհատական բնակելի տուն, գրեթե անհավանական՝ 45 մլն դրամով, որը իրենց թույլ չեն կարող տալ որոշ պետական պաշտոնյաներ:

Հակոբյանը տրանսպորտային որեւէ միջոց չի հայտարարագրել:

Գլխավոր քարտուղարի բանկային հաշիվների մնացորդը կազմել է 700 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 1 մլն 1 հազար դրամ:

2023 թվականի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 12 մլն 466 հազար դրամ, որից 10 մլն 148 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, 2 մլն 200 հազար դրամը «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ պետական հիմնարկից, իսկ 118 հազար դրամը՝ «ՔԼԵՎԸՐ ՏԵՔ» լոգիստիկ ընկերությունից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 43 մլն դրամ:

Հասմիկ Հակոբյանի ամուսնու՝ Վարդան Սարգսյանի հայտարարագրից հասկանում ենք, որ նշված անհատական բնակելի տունը գտնվում է Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղում:

Հակոբյանի ամուսնու՝ հաշվետու տարվա եկամուտը կազմել է 5 մլն 22 հազար դրամ, որը երեք կազմակերպություններից՝ «ՖԻՇՄԵՆ ԻՄՊՈՐՏ», «ԱՐՏՖԱՐՄ», «ՔԼԵՎԸՐ ՏԵՔ» ընկերություններից ստացած աշխատանքի վարձատրությունն է:

Հետաքրքիրն այն է, որ Վարդան Սարգսյանի հայտարարագրում ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 27 մլն դրամ, որը նույն բնակարանի հիփոթեքն է:

Անհասկանալի է, թե ինչպես է նույն օրը նույն տեղում ձեռք բերված բնակարանի հիփոթեքային վարկի մայր գումարի մնացորը կնոջ հայտարարագրում կազմել 43 մլն դրամ, իսկ ամուսնու հայտարարագրում՝ 27 մլն դրամ:

Հասմիկ Հակոբյանը մշտապես կատարել է հաշվապահական աշխատանքներ: 2000 թվականից եղել է «Որդան կարմիր» ՍՊԸ-ի հաշվապահը, ապա «Անտարես» ՍՊԸ-ի հաշվապահը:

Հաշվապահական 2-3 տարվա փորձ ունենալով՝ Հակոբյանը նշանակվել է «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ պետական հիմնարկ որպես հաշվապահ, աշխատելով 10 տարի այս պաշտոնում՝ հետագայում ստանձնել է գլխավոր հաշվապահի պաշտոնը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԿՏԻՎՆԵՐՆ ՈՒՂՂԵԼ ԱՐՑԱԽԻ ՖՈՆԴԻՆ

ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ Ադամ Շիֆը, ով Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի սատարումն ունի Սենատի առաջիկա ընտրություններին ընդառաջ, ներկայացրել է երկկուսակցական օրենսդրական նախագիծ՝ Ադրբեջանի ֆինանսական ակտիվները բռնագրավելու եւ դրանք «Արցախի եկամուտների վերականգնման հիմնադրամին» փոխանցելու համար, որը պետք է ստեղծվի ցեղասպանական էթնիկ զտումների արդյունքում՝ Արցախից բռնի կերպով տեղահանված հայերին կորցրած եկամուտների համար փոխհատուցումներ տրամադրելու նպատակով:

Ադամ Շիֆը, օրինագիծը ներկայացնելիս, մասնավորապես, հայտարարել է. «Արցախի ժողովրդի դեմ Ադրբեջանի շարունակական գործողությունները հումանիտար աղետ են ստեղծել եւ հավասարազոր են էթնիկ զտումների: Մենք պետք է ապահովենք, որպեսզի մեղավորները պատասխանատվության ենթարկվեն, եւ արցախցիները փոխհատուցումներ ստանան իրենց հսկայական կորուստների դիմաց: Իմ նախագիծը կապահովի արդարություն եւ ֆինանսական փոխհատուցման մեխանիզմ նրանց համար, ովքեր Ադրբեջանի ագրեսիայի պատճառով կորցրել են ամեն ինչ»:

Մեկնաբանելով նախագիծը՝ Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Մենք միանում ենք կոնգրեսական Շիֆին՝ ձգտելով համապատասխան ԱՄՆ նախագահի լիազորություններին՝ բռնագրավել ադրբեջանական ակտիվները եւ դրանք փոխանցել «Արցախի եկամուտների վերականգնման հիմնադրամին»՝ Արցախի եւ հայ ժողովրդի դեմ Ադրբեջանի հանցագործությունների համար արդարադատություն ապահովելու համարձակ նախաձեռնությանը: Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի ազգային խորհուրդը, տարածաշրջանային մարմինները եւ տեղական մասնաճյուղերը հպարտ են, որ սատարում են Ադամ Շիֆին՝մեր համայնքի երկարամյա բարեկամին Կալիֆոռնիայից ԱՄՆ Սենատի անդամի համար նրա պայքարում եւ խրախուսում ենք «Ոսկե նահանգի» ամերիկահայերին քվեարկել եւ կամավորագրվել նրա քարոզարշավին:

Օրինագրծի անցկացումն ապահովելու համար Հայ դատի հանձնախումբը սկսել է համագաղութային արշավ:

Շիֆին, որպես երկկուսակցական օրինագծի սկզբնական հովանավորներ, միացել են Կոնգրեսի հայկական հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնը եւ ներկայացուցիչներ Գեյբ Ամոն, Ջոյս Բիթին, Ջիմ Կոստան, Ան Էշուն, Ջոշ Գոթհայմերը, Դագ Լա Մալֆան, Սեթ Մագազիները, Ջեյմս Մըք Գովերնը, Գրեյս Մենգը, Քեվին Մուլինը, Գրեյս Նապոլիտանոն, Էլեոնոր Հոլմս Նորթոնը, Յան Շակովսկին, Լինդա Սանչեսը, Բրեդ Շերմանը, Դինա Տիտուսը եւ Լորի Թրահանը:

Արցախի եկամուտների վերականգնման ակտը նպատակ ունի պատասխանատվության ենթարկելու Ադրբեջանին՝ ըստ հետեւյալի.

- Ադրբեջանի կառավարությանը պարտադրել փոխհատուցում տրամադրել էթնիկ զտման ենթարկված հայերին:
- «Արցախի եկամուտների վերականգնման հիմնադրամի» ստեղծում՝ կորսված գույքի եւ բիզնեսի եկամուտների փոխհատուցման նպատակով:

Եթե Ադրբեջանը հրաժարվի, ապա օրինագիծը թույլ է տալիս կալանք դնել ԱՄՆ-ում Ադրբեջանի ինքնիշխան ակտիվների վրա՝ այդ վճարումները կատարելու համար:

Հատկանշական է, որ օրինագիծը վերահաստատում է Արցախի հայերի վերադարձի եւ նրանց սեփականության տիրապետման իրավունքները: Ակտիվների առգրավման միջոցով փոխհատուցումը չի վերացնի հայկական գույքի սեփականության հանգամանքը՝ ապահովելով, որ հայերը կարողանան վերականգնել իրենց տները եւ բիզնեսները:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 2 մարդ զոհվել է, 11-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Ես՝ Արայիկ Ալեքսանյանս, կորցրել եմ «Բելարուս» մակնիշի 1221.20682 UP պետհամարանիշով տրակտորի տեխնիկական անձնագիրը: Գտնողին խնդրում եմ զանգահարել 093 002 978 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Ես՝ Նարեկ Քեթցյանս, կորցրել եմ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության միջին հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 3 բաժնի ավագ հարկային տեսուչի վկայականս (ՀԾ1401): Գտնողին խնդրում եմ զանգահարել 091 288 200 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

Ես՝ Արթուր Խաչատրյանս, կորցրել եմ Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված ծառայողական վկայականս (N1869): Գտնողին խնդրում եմ զանգահարել 095 100 004 հեռախոսահամարով:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Հայասի Գրուպ» ՍՊԸ-ի՝ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ գյուղի վարչական տարածքում արդյունաբերական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ 10.0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի սեպտեմբերի 24-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ժողովուրդ» օրաթերթի 13.08.2020 թ. թիվ 129 (2170) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման» եւ 21.08.2020թ. թիվ 134 (2175) համարի 6-րդ էջում տպագրված «Հայտարարության», տեղեկացնում ենք, որ ծանուցման եւ հայտարարության մեջ նշված՝ ՀՀ, Արարատի մարզ, համայնք Հովտաշատ, Բաղրամյան փողոց, 22-րդ փակուղի, թիվ 1, 3, 5 եւ 7 հասցեներում գտնվող անշարժ գույքերի աճուրդային փուլերը շարունակվելու են 24.09.2024թ.-ից, 20000000 ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ «Հրապարակային ծանուցման» մեջ նշված ընթացակարգով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

Telcell

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«Թել-Սել» վճարահաշվարկային ընկերությունը հայտարարում է բաժնետոմսերի թողարկման մեկնարկի մասին: Շուրջ 1,5 միլիարդ դրամ ընդհանուր արժեքով թողարկվում են բաժնետոմսեր, որոնցից յուրաքանչյուրի գնման արժեքը 400 դրամ է: Հիմնադրումից 17 տարի անց վճարահաշվարկային ընկերություններից այն առաջինն է, որ թողարկում է բաժնետոմսեր:

«Բաժնետոմսերի նվազագույն քանակը, որը կարող է ձեռք բերել քաղաքացին, 10 հատն է: Այսինքն՝ 4 հազար դրամ առաջին գնման համար, այնուհետեւ ցանկացած գնման համար կարող են վճարել 400 դրամ: Սա բացառիկ առաջարկ է, եւ մեր ուղղվածությունն է՝ ֆինանսական այս գործիքակազմը ներդնելով», - ասաց «Թել-Սել» ԲԲ ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանը:

Ընկերությունն ազդագրով պարտավորվում է իրականացնել տարեկան շահույթից առնվազն 50 տոկոս դիվիդենդների տեղաբաշխում:

Բաժնետոմսերի տեղաբաշխումը իրականացնելու է «Արմբրոկ» ներդրումային ընկերությունը: Ընկերության ղեկավար, «Արմբրոկ» ընկերության տնօրեն Արամ Կայֆաջյանը խոսել է բաժնետոմսերի թողարկման կարեւորության եւ առանձնահատկությունների մասին:

«Ինչպես գիտեք՝ նախկինում մի քանի անգամ թողարկվում էր IPO-ներ՝ հիմնականում բանկերի կողմից, բայց սա առաջին դեպքն է, երբ ֆինանսական տեխնոլոգիական ոլորտը ներկայացնող ընկերությունն է իրականացնում այս թողարկումը: Առաջին դեպքն է, որ այսպիսի նորարարական հետագիծ ունեցող ընկերությունն է հայտնվում արժեթղթերի շուկայում», - նշում է «Արմբրոկ» ընկերության տնօրեն Արամ Կայֆաջյանը:

Այն գործողությունները, որ այժմ կատարվում են Telcell-ի կողմից, միտված են զարգացնելու ոլորտը եւ հասարակությանը տրամադրելու ավելի նորարար ֆինանսական գործիքակազմ:

«Ֆինտեխ ոլորտում Telcell-ն առաջինն է, որ թողարկում է բրենդային Visa թվային քարտեր. երեւի թե սա բանկերի համար սովորական գործառույթ է, բայց ֆինտեխ բնույթի ընկերությունների համար սա ձեռքբերում է»,- մանրամասնում է «Թել-Սել» ԲԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Լիանա Հունանյանը:

Telcell բաժնեմասերի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ Telcell Wallet հավելվածի օգտատերերը բաժնեմասեր կարող են գնել Telcell Wallet հավելվածում՝ պարզ եւ արագ:

Խոսելով Telcell-ի բիզնես զարգացման մասին՝ «Թել-Սել» ԲԲ ընկերության ֆինանսական տնօրեն Թամարա Սարգսյանն առանձնացրեց Telcell-ի վերջին 7 տարիների արդյունքները՝ ընդգծելով հստակ պրոգրեսը:

«2019 թվականից մինչ 2023 թվականը Telcell Wallet-ի գրանցված օգտատերերի քանակն աճել է ավելի քան 20 անգամ: Մենք ակնկալում ենք, որ այս աճը լինելու է դինամիկ եւ շարունակական: Telcell Wallet-ի հաջորդ կարեւոր ցուցանիշը շրջանառության աճն է, որը գրանցել է դինամիկ աճ՝ 2019-2023 թվականներին աճելով ավելի քան 14 անգամ: Հարկ է նշել, որ գործարքների քանակով եւս ունենք նման աճ», - նշել է Թամարա Սարգսյանը: «Թել-Սել» ԲԲ ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանը, ամփոփելով ասուլիսը, քաղաքացիներին առաջարկեց բաց չթողնել հեռանկարը եւ գալ Telcell-ի բաժնեմասի հետեւից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ, 19-րդ փողոց, 1 հասցեում գտնվող 0,1 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 933000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ, 19-րդ փողոց, 2 հասցեում գտնվող 0,1 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 950000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ, 19-րդ փողոց, 3 հասցեում գտնվող 0,1 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 935000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ, 19-րդ փողոց, 4 հասցեում գտնվող 2 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 23800000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ, 19-րդ փողոց, 5 հասցեում գտնվող 0,05 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 4405000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ հասցեում գտնվող 1,5018 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 4800000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, գյուղ Շողակաթ հասցեում գտնվող 3.7 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 10000000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Գավառ, գյուղ Նորատուս, Սեւանի փողոց, 32 հասցեում գտնվող 491,2 քմ բնակելի տուն եւ 0,159 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12300000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 07.10.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԱՐՄԵՆԻԱ»

ՓԱՌԱՏՈՆՆ ԱԶԴԱՐԱՐԵԼ Է ՀԱՄԵՐԳԱՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Մեկնարկել է «Արմենիա» 8-րդ միջազգային երաժշտական փառատոնը, որով էլ ազդարարվել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի 19-րդ համերգաշրջանի բացումը:

Մինչեւ հոկտեմբերի 28-ը շարունակվող փառատոնը 5 սիմֆոնիկ համերգ կպարգեւի դասական երաժշտության սիրահարներին, այդ թվում՝ Հայաստան այցելող զբոսաշրջիկներին:

Համերգային երեկոյին ներկա էին ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններ, Հայաստան ժամանած՝ ֆրանկոֆոնիայի խաղերի կազմկոմիտեի պատվիրակության անդամները:

«Արմենիա» 8-րդ միջազգային փառատոնի բացման համերգի ծրագրում հնչել են Գրիգոր Եղիազարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը, Ալեքսեյ Շորի Դաշնամուրի կոնցերտը՝ «Ճամփորդական նոթատետր», եւ Սերգեյ Ռախմանինովի Դաշնամուրի թիվ 2 կոնցերտը: Համերգը ղեկավարում էր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը: Շորի եւ Ռախմանինովի դաշնամուրային կոնցերտները Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ կատարել է դաշնակահար Եկվոն Սունվուն:

Եկվոն Սունվուն Երեւան էր այցելել եւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ էր ունեցել նաեւ 2023 թվականին: Դաշնակահարը նկատում է, որ Սիմֆոնիկ նվագախմբի եւ մաեստրո Սմբատյանի հետ համագործակցության լավ փորձ ունի, եւ իր համար հաճելի է Սիմֆոնիկ նվագախմբի ու նրա ղեկավարի հետ համատեղ աշխատանքը:

Ռախմանինովի Դաշնամուրի թիվ 2 կոնցերտն ամենահայտնի դաշնամուրային ստեղծագործություններից է, եւ դաշնակահարի խոսքով՝ միշտ հաճելի է ընկղմվել այդ գեղեցկագույն երաժշտության մեջ ու ներկայացնել սեփական հույզերը: Անդրադառնալով Ալեքսեյ Շորի «Ճամփորդական Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ Գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյան նոթատետր» կոնցերտին՝ Եկվոն Սունվուն նկատում է, որ ստեղծագործության անվանումն արդեն խոսում է երաժշտության մասին: Շորի կոնցերտի հնչյուններն ունկնդրին ու կատարողին շատ սահուն տեղափոխում են մի վայրից մյուսը՝ փոխանցելով հեղինակի զգացումներն ու ապրումները: Համերգից առաջ մենակատարը հույս հայտնեց, որ համերգասրահում ներկաները մեծ բավականություն կստանան ծրագրից: Իսկ ունկնդրի վերաբերմունքը երեկոյի ընթացքում արտահայտվում էր բուռն ու չդադարող ծափերով:

Նշենք նաեւ, որ Եկվոն Սունվուն դաշնամուրի վարպետության դասեր է անցկացրել «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի պատանի երաժիշտների համար:

«Արմենիա» միջազգային երաժշտական փառատոնի հաջորդ համերգը տեղի կունենա սեպտեմբերի 23-ին: Համերգային ծրագրում ներառված են Էդվարդ Միրզոյանի, Ալեքսեյ Շորի եւ Կամիլ Սեն-Սանսի ստեղծագործությունները: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ կունենա թավջութակահար Մաքսիմիլիան Հորնունգը: Համերգը կղեկավարի դիրիժոր Նաբիլ Շեհատան:

«Արմենիա» 8-րդ միջազգային երաժշտական փառատոնը կազմակերպել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ԱԶՆԱՎՈՒՐԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԹԱՏՐՈՆԸ» ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գրականության եւ արվեստի թանգարանի նոր ցուցասրահում սեպտեմբերի 18-ից գործում է «Պատում մեկ իրի» ժամանակավոր ցուցադրությունների շարքը, որի շրջանակում պարբերաբար կցուցադրվեն թանգարանում պահվող բացառիկ ցուցանմուշներ: Շարքի մեկնարկը տրվել է Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակին նվիրված «Ազնավուրի մանկության թատրոնը» ցուցադրությամբ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանն այցելել են ցուցահանդես, շրջայց կատարել թանգարանում եւ հանգամանորեն ծանոթացել ներկայացված ցուցանմուշների պատմությանը:

Նշենք, որ ցուցադրության առանցքային մաս է կազմում բացառիկ նմուշ հանդիսացող Ազնավուրի առաջին բեմական զգեստը: Այս ցուցանմուշի կողքին ներկայացված են նաեւ մեծն շանսոնյեի մանկության լուսանկարները, ներկայացումների ազդագրերը:

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Իտալիայի Մանտուա քաղաքի BLOOM ROOM Laboratory ցուցասրահում բացվել է ցուցահանդես, որն իտալաբնակ հանրությանը կներկայացնի 11 հայ ստեղծագործողների աշխատանքները:

GET in TOUCH խորագիրը կրող ցուցահանդեսին ներկայացվել են Հրաչյա Վարդանյանի, Ալբերտ Վարդանյանի, Էդգար Գրիգորյանի, Հարություն Կարապետյանի, Կարեն Բարսեղյանի, Մկրտիչ Մաթեւոսյանի, Նորայր Կասպերի, Նվարդ Երկանյանի, Գուրգեն Գինոսյանի, ինչպես նաեւ EksyLeathergoods-ի, Muscari Association-ի եւ Family Care Foundation-ի (համատեղությամբ)՝ ստեղծագործական նախագծերը: Ցուցահանդեսի համադրողն է Ավետիք Վարդանյանը, պրոդյուսերները՝ Հրաչյա Վարդանյանը, Անդրեա Միլսը եւ Բենեդետա Օմբրոնին:

«Պատմության ընթացքում մարդկությունը ձգտել է հասկանալ ժամանակի ֆենոմենը եւ կանխատեսել ապագան աշխարհաճանաչողությամբ, ծիսական արարողակարգերի ու աստղադիտումների միջոցով: Սա հանգեցրեց օրացույցների ստեղծմանը, որոնք ժամանակին կրում էին խոր ոգեղեն ու մշակութային նշանակություն: Այս հնագույն արտեֆակտները ավելին էին, քան ունեն ժամանակակից օրացույցները, սրանք ժամանակի ճանաչման սրբազան քրատեզներ էին, նախատեսված հասկանալ այն, «... ինչ եղել է, կա ու դեռ պիտի գա»: Յուրաքանչյուր արվեստի գործ, որ ստեղծվել է համընդհանուր ժամանակային տարածության մեջ, դեր է խաղում ապագայի ձեւավորման վրա: Այն դառնում է անցյալը, ներկան ու ապագան կապող օղակ: Ստեղծագործությունները օգնում են մեզ ավելի լավ ճանաչել մեր սեփական ժամանակը՝ հնարավորություն տալով վերանայել անցյալը, գնահատել ներկան եւ կանխատեսել ապագան», - ցուցահանդեսի մասին նշում են Ավետիք եւ Հրաչյա Վարդանյանները: Նշենք, որ այն արդեն իսկ մեծ հետաքրքրություն է առաջացրել քաղաքում:

Ցուցահանդեսը GALIQUE Art Space-ի, ArtInsight հարթակի, BLUE X-ի եւ BLOOM ROOM Laboratory-ի համագործակցության արդյունքն է: Հավելենք, որ ցուցահանդեսը կտեւի մեկ ամսից ավելի:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԱՃԱՌՔԻ ԵՆ ՀԱՆՎԵԼ «ՆՈԱ» – «ՄԼԱԴԱ ԲՈԼԵՍԼԱՎ» ԽԱՂԻ ՏՈՄՍԵՐԸ

Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլի առաջին տուրում Երեւանի «Նոան» հոկտեմբերի 3-ին Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում կմրցի չեխական «Մլադա Բոլեսլավի» հետ:

Խաղի տոմսերն արդեն վաճառքում են եւ հասանելի են tickets.noahfc.am կայքում:

Հիշեցնենք, որ «Նոան» Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլ դուրս եկավ՝ սահմանելով մի շարք ռեկորդներ: Երեւանյան թիմը եվրոպական 50 թիմերից միակն էր, որը, պայքարը սկսելով որակավորման առաջին փուլից, հաղթահարեց 4 փուլ: «Նոան» նաեւ ընթացիկ մրցաշրջանի որակավորման փուլերի ամենախոշոր հաշվով հաղթանակը տարավ՝ 7:0 հաշվով հաղթելով Մալթայի «Սլիմա Ուոնդերերսին»:

Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլում «Նոան» առաջին խաղը կանցկացնի Երեւանում՝ հոկտեմբերի 3-ին մրցելով չեխական «Մլադա Բոլեսլավի» հետ: Հոկտեմբերի 24-ին երեւանյան թիմը կհյուրընկալվի ավստրիական «Ռապիդին», իսկ նոյեմբերի 7-ին՝ Լոնդոնի «Չելսիին»:

Նոյեմբերի 4-ին «Նոան» կընդունի Ռեյկյավիկի «Վիկինգուրին», դեկտեմբերի 12-ին՝ Կիպրոսի ԱՊՕԵԼ-ին, իսկ Լիգայի փուլի վերջին խաղում դեկտեմբերի 19-ին կհյուրընկալվի սերբական «Բաչկա Տապոլային»:

ՍՊԵՐՑՅԱՆԸ՝ ՌԴ ԱՄԵՆԱԹԱՆԿԱՐԺԵՔ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Transfermarkt-ի մասնագետները թարմացրել են Ռուսաստանի առաջնության որոշ ֆուտբոլիստների տրանսֆերային արժեքի տվյալները:

«Կրասնոդարի» եւ Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանի տրանսֆերային արժեքը մնացել է անփոփոխ եւ նա «Զենիթի» կիսապաշտպան Վենդելի հետ միասին շարունակում է գլխավորել ՌՊԼ-ի ամենաթանկարժեք ֆուտբոլիստների վարկանիշը: Ֆուտբոլիստների տրանսֆերային արժեքը գնահատվում է 20 մլն եվրո:

Գեորգի Հարությունյանի տրանսֆերային արժեքը եւս մնացել է անփոփոխ եւ կազմում է 1 մլն եվրո:

«Լոկոմոտիվի» եւ Հայաստանի հավաքականի պաշտպան Նաիր Թիկնիզյանի տրանսֆերային արժեքը գնահատվում է 6,5 մլն եվրո, թիմի նորեկ Էդգար Սեւիկյանի տրանսֆերային արժեքը՝ 2 մլն եվրո:

Հայաստանի հավաքականի եւ «Ռուբինի» կիսապաշտպան Ուգոչուկվու Իվուի տրանսֆերային արժեքը եւս չի փոխվել եւ կազմում է 1,5 մլն եվրո:

«Ռոստովի» կիսապաշտպան Խորեն Բայրամյանի տրանսֆերային արժեքը գնահատվում է 1 մլն եվրո:

● *Սեպտեմբերի 23-ին՝ ժամը 19:30-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի «Սիրո խոստովանություն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Կենտրոնական բանկի անկախությունը:

Արամ Գաբրիելյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան.

- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անկախության ամենաբարձր աստիճանը նպատակի սահմանման անկախությունն է, որն ունի, օրինակ, ԱՄՆ ԴՊՀ-ն: Ելնելով տնտեսական քաղաքականության գերակայություններից՝ նա կարող է փոփոխել գլխավոր նպատակը: ՀՀ-ի դեպքում ԿԲ-ն օժտված չէ այս աստիճան անկախությամբ. ԿԲ-ի գլխավոր նպատակը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ եւ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով: Նպատակային ցուցանիշի ընտրության անկախությունը Հայաստանում սահմանվում է «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով: Ինչ վերաբերում է գործառնական անկախությանը, այն ենթադրում է, որ ԿԲ-ն ինքնուրույն կարող է կիրառել իր գործիքակազմը գլխավոր նպատակին հասնելու համար: ՀՀ ԿԲ-ն ունի այս աստիճանի անկախություն, ինչով օժտված են ոչ բոլոր երկրների ԿԲ-ները: Օրինակ՝ Անգլիայի ԿԲ-ն մինչեւ 1998 թվականը չուներ գործիքակազմի կիրառման ինքնուրույնություն. դրան միջամտում էր գործադիր իշխանությունը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Աղրանքներ եւ տրանսպորտային միջոցներ ներմուծելիս՝ հայտարարագրման ժամանակ, ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու դեպքում տուգանքի ի՞նչ չափ է սահմանված, եթե խախտումը առաջացնում է մաքսային վճարների պակաս հաշվարկում:

Հովհաննես Պողոսյան (50 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 203 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները եւ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում, առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում օրենքով սահմանված կարգով, ինչպես նաեւ տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 212 հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքները ենթակա են վերցման:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ինչ-որ մեկի «սուր գրոտեսկային հումորը» տեղ է գտել երրորդ դասարանի աշակերտների դասագրքում:

Դժվար է պատկերացնել, որ փոքրիկների ստեղծագործ միտքը այս «երգիծանքից» կարող է զարգանալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 11 +24 + 29
Կոտայքի լեռներ	+8 + 11 +25 + 29
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +29 + 30
Գեղարքունիք	+9 + 11 +23 + 28
Լոռի	+9 + 14 +23 + 27
Տավուշ	+12+ 17 +27 + 30
Արագածոտնի լեռներ	+9 + 12 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+15+ 18 +27 + 31

Արարատ	+17 + 20 +33 + 35
Արմավիր	+15 + 18 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 11 +25 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 +32 + 35
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +29 + 32
ԼՂՀ	+13 + 16 +27 + 31
Երեւան	+24 + 26 +30 + 32

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*